ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁ

ք. Երևան 18.02.2019թ.

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի
թիվ ՍՑ-ԱՄ-2019/22

Հայաստանի Հանրապետության գնումների հետ կապված բողոքներ քննող անձ Միեր Անանյանս, ուսումնասիրելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 30.01.2019թ. թիվ 27/26-3/1178-19 գրությամբ Ա/Ձ Շուշանիկ Ավագյանին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված ընթացակարգով ներկայացված հիմքերը, պարզեցի հետևյալը.

1. **<u>ՀՀ ֆինանսների նախարարության ներկայացրած փաստերը և պահանջը.</u>**

ՀՀ ֆինանսների նախարարությունը, «Սևանի հոգեբուժական հիվանդանոց» ՓԲԸ-ի 23.01.2019թ. թիվ 47 գրության հիման վրա, 30.01.2019թ. թիվ 27/26-3/1178-19 գրությամբ դիմել է ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձին՝ խնդրելով նախաձեռնել Ա/Ձ Շուշանիկ Ավագյանին (այսուհետ՝ Մասնակից) գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու ընթացակարգ:

2. **<u>Ա/Ձ Շուշանիկ Ավագյանի ներկայացրած փաստարկները և դիրքորոշումը.</u>**

Գնումների հետ կապված բողոքներ քննող անձի սույն որոշումը կայացվելու օրվա դրությամբ Ա/Ձ Շուշանիկ Ավագյանը որևէ դիրքորոշում չի ներկայացրել:

Մասնակիցը, պատշաճ ծանուցված լինելով ՍՑ-ԱՄ-2019/22 ընթացակարգի շրջանակներում 04.02.2019թ. ժամը 10:30-ին հրավիրված նիստի վերաբերյալ, չի ապահովել իր ներկայացուցչի մասնակցությունը:

3. **<u>«Սևանի հոգեբուժական հիվանդանոց» ՓԲԸ-ի կողմից ներկայացված փաստարկները և դիրքորոշումը.</u>**

«Սևանի հոգեբուժական հիվանդանոց» ՓԲԸ-ն (այսուհետ՝ Պատվիրատու) ՀՀ ֆինանսների նախարարությանն ուղղված 23.01.2019թ. թիվ 47 գրությամբ հայտնել է, որ Պատվիրատուի կարիքների համար սննդամթերք ձեռքբերելու նպատակով «ՍՀՀ-ԷԱՃԱՊՁԲ-19/3» ծածկագրով էլեկտրոնային աճուրդի (այսուհետ՝ Ընթացակարգ) առաջին տեղ զբաղեցրած մասնակից մասնակից Ա/Ձ Շուշանիկ Ավագյանի փաստաթղթերի գնահատման արդյունքում հրավերի պահանջների նկատմամբ արձանագրվել է անհամապատասխանություն՝ առաջարկվող ապրանքի ամբողջական նկարագրին, որի մասին էլեկտրոնային եղանակով ծանուցվել էր Մասնակցին: Որից հետո, առաջարկվել է մեկ աշխատանքային օրվա ընթացքում շտկել անհամապատասխանությունը, սակայն սահմանված ժամկետում, առաջին տեղ զբաղեցրած մասնակցի կողմից առաջարկվող ապրանքի ամբողջական նկարագրի տեխնիկական բնութագիրը լրացել էր թերի:

Ընթացակարգի գնահատող հանձնաժողովը, ղեկավարարվելով ՀՀ կառավարության 2017 թվականի մայիսի 4-ի N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 48-րդ կետի 2-րդ ենթակետով 18.01.2019թ. թիվ 5 որոշմամբ Ա/Ձ Շուշանիկ Ավագյանի հայտի 1-ին, 15-րդ, 19-րդ, 32-րդ 41-րդ, 61-րդ և 64-րդ չափաբաժինները մերժել է:

Պատվիրատուն, պատշաճ ծանուցված լինելով ՍՑ-ԱՄ-2019/22 ընթացակարգի շրջանակներում 04.02.2019թ. ժամը 10:30-ին հրավիրված նիստի վերաբերյալ, չի ապահովել իր ներկայացուցչի մասնակցությունը:

4. ՍՑ-ԱՄ-2019/22 ընթացակարգի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը.

ՍՑ-ԱՄ-2019/22 ընթացակարգի քննության համար էական նշանակություն ունեն հետևյալ փաստերը՝

1. «Սևանի հոգեբուժական հիվանդանոց» ՓԲԸ-ի կողմից «Սևանի հոգեբուժական հիվանդանոց» ՓԲԸ-ի կարիքների համար կազմակերպվել է «ՍՀՀ-ԷԱՃԱՊՁԲ-19/3» ծածկագրով էլեկտրոնային աճուրդ, որին մասնակցելու նպատակով հայտ է ներկայացրել Ա/Ձ Շուշանիկ Ավագյանը:

2. Աճուրդի գնահատող հանձնաժողովի 10.01.2019թ. ժամը 11:00-ի նիստի արձանագրությամբ կայացված որոշմամբ Ա/Ձ Շուշանիկ Ավագյանը ճանաչվել է առաջին տեղ զբաղեցրած մասնակից Ընթացակարգի մի շարք չափաբաժինների մասով, որին էլեկտրոնային աճուրդի համակարգի միջոցով ծանուցվել է սահմանված ժամկետում և կարգով որակավորման չափանիշները հիմնավորող փաստաթղթերը ներկայացնելու անհրաժեշտության վերաբերյալ:

3. Աճուրդի գնահատող հանձնաժողովի 16.01.2019թ. ժամը 14:30-ի նիստի թիվ 4 արձանագրության համաձայն՝ Ա/Ձ Շուշանիկ Ավագյանը չի ներկայացրել ապրանքի ամբողջական նկարագիրը՝ համակարգը չաշխատելու պատճառով:

4. Նույն արձանագրության համաձայն, գնահատող հանձնաժողովը, հիմք ընդունելով ՀՀ ֆինանսների նախարարության հայտարարությունը այն մասին, որ 2019թ. հունվարի 11-ից մինչև հունվարի 14-ը համակարգը չի գործել, հանձնաժողովը որոշել է ղեկավարվելով Կարգի 47-րդ կետով, կասեցնել նիստը և Մասնակցին ծանուցել մեկ աշխատանքային օրյա ժամկետում՝ մինչև 18.01.2019թ. ժամը 09:30-ը շտկել անհամապատասխանությունը:

5. Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 18.01.2019թ. ժամը 11:30-ի նիստի թիվ 5 արձանագրության կայացված որոշմամբ Ա/Ձ Շուշանիկ Ավագյանի հայտը մերժվել է այն հիմնավորմամբ, որ Մասնակցի կողմից հրավերով սահմանված ժամկետում և կարգով չի շտկվել անհամապատասխանությունը, մասնավորապես ապրանքի տեխնիկական բնութագիրը լրացվել է թերի:

5. ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի հիմնավորումները և եզրահանգումը.

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձ՝ Միհր Անանյանս, ուսումնասիրելով ՀՀ ֆինանսների նախարարության 30.01.2019թ. թիվ 27/26-3/1178-19 գրությունը, «Սևանի հոգեբուժական հիվանդանոց» ՓԲԸ-ի 23.01.2019թ. թիվ 47 գրությունը և կից փաստաթղթերը, հայտնում եմ հետևյալը.

«Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի համաձայն՝ բացառությամբ նույն օրենքի 23-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին, 3-րդ, 4-րդ և 5-րդ կետերով նախատեսված ընթացակարգով գնում կատարելու դեպքերի, գնումների ընթացակարգերին մասնակցելու իրավունք չունեն այն անձինք, որոնք հայտը ներկայացնելու օրվա դրությամբ ներառված են գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում: Մասնակիցն ընդգրկվում է նշված ցուցակում, եթե՝

ա. խախտել է պայմանագրով նախատեսված կամ գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունը, որը հանգեցրել է պատվիրատուի կողմից պայմանագրի միակողմանի լուծմանը կամ գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը,

բ. որպես ընտրված մասնակից հրաժարվել է պայմանագիր կնքելուց,

գ.հայտերը բացելուց հետո հրաժարվել է գնման գործընթացին հետագա մասնակցությունից:

Օրենքի 6-րդ հոդվածի 2-րդ մասը սահմանում է, որ գնումների գործընթացին մասնակցելու իրավունքից զրկված մասնակցի վերաբերյալ ունեցած տեղեկությունների

հիման վրա լիազորված մարմինը ընթացակարգ է նախաձեռնում գնումների հետ կապված բողոքներ քննող մարմնում՝ առանց վճարի: Տվյալ մասնակցի կարծիքը լսելուց հետո գնումների հետ կապված բողոքներ քննող անձը սույն օրենքի 50-րդ հոդվածի 6-րդ մասով սահմանված ժամկետում որոշում է կայացնում մասնակցին սույն հոդվածով նախատեսված ցուցակում ընդգրկելու վերաբերյալ: Անձը նշված ցուցակում ընդգրկվում է երկու տարի ժամկետով:

Օրենքի 34-րդ հոդվածի 5-րդ մասի 1-ին կետի համաձայն՝ առաջին և հաջորդաբար տեղերը զբաղեցրած մասնակիցներին որոշելուց հետո հրավերով սահմանված ժամկետում առաջին տեղը զբաղեցրած մասնակիցը հանձնաժողովին է ներկայացնում իր՝ գնումներին մասնակցելու իրավունքը և հրավերով նախատեսված որակավորման չափանիշներին համապատասխանությունը հիմնավորող՝ հրավերով նախատեսված փաստաթղթերը (տեղեկությունները):

ՀՀ կառավարության 18.05.2017թ. N 534-Ն որոշմամբ հաստատված «Էլեկտրոնային աճուրդի իրականացման» կարգի (այսուհետ՝ Կարգ) 19-րդ կետի 4-րդ ենթակետի համաձայն՝ Աճուրդն ամփոփվելուն հաջորդող աշխատանքային օրը գնահատող հանձնաժողովի քարտուղարը համակարգի միջոցով ծանուցում է առաջին տեղն զբաղեցրած մասնակցին՝ առաջարկելով ծանուցումն ուղարկելու օրվանից հաշված երեք աշխատանքային օրվա ընթացքում համակարգի միջոցով ներկայացնել որակավորման չափանիշները հիմնավորող՝ հրավերով նախատեսված փաստաթղթերը, բացառությամբ գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված դեպքերի, ինչպես նաև սույն կարգի 11-րդ կետի 3-րդ ենթակետով նախատեսված փաստաթղթերը:

Նույն կետի 5-րդ ենթակետի համաձայն՝ սույն կետի 4-րդ ենթակետով նախատեսված փաստաթղթերը չներկայացվելու դեպքում հանձնաժողովը հայտերի գնահատման նպատակով հրավիրված նիստում մերժում է առաջին տեղն զբաղեցրած մասնակցի հայտը, և փաստաթղթեր ներկայացնելու պահանջ է ներկայացնում հաջորդաբար տեղ զբաղեցրած մասնակցին:

Կարգի 22-րդ և 23-րդ կետերի համաձայն՝

22. Սույն կարգի 19-րդ կետով սահմանված ժամկետի ավարտին հաջորդող աշխատանքային օրը քարտուղարն էլեկտրոնային եղանակով հանձնաժողովի անդամներին միաժամանակ տրամադրում է առաջին տեղն զբաղեցրած մասնակցի կողմից ներկայացված փաստաթղթերի պատճենները, գնահատման թերթիկների երկուական օրինակ և կոմիտեից ստացված տեղեկատվությունը: Հայտերի գնահատման արդյունքների հաստատման նպատակով նիստը հրավիրվում է ոչ ուշ, քան փաստաթղթերը հանձնաժողովի անդամներին տրամադրվելուն հաջորդող երրորդ աշխատանքային օրը: Ընդ որում, ապրանքների գնման դեպքում հանձնաժողովը գնահատում է նաև ներկայացված տեխնիկական բնութագրերի համապատասխանությունը հրավերով սահմանված տեխնիկական բնութագրերի պահանջներին, իսկ անհամապատասխանություն արձանագրելու դեպքում հանձնաժողովի նիստի արձանագրության մեջ մանրամասն նկարագրվում են հայտնաբերված անհամապատասխանությունները:

23. Առաջին տեղն զբաղեցրած մասնակցի կողմից փաստաթղթերն ամբողջական չներկայացվելու, ինչպես նաև ներկայացված որակավորման չափանիշները հիմնավորող՝ հրավերով նախատեսված փաստաթղթերի, իսկ ապրանքների գնման դեպքում նաև սույն կարգի 11-րդ կետի 3-րդ ենթակետի «ա» պարբերությամբ նախատեսված փաստաթղթի գնահատման արդյունքում հրավերի պահանջների նկատմամբ անհամապատասխանություններ արձանագրվելու դեպքում քարտուղարը նույն օրը համակարգի միջոցով ծանուցում է առաջին տեղն զբաղեցրած մասնակցին՝ առաջարկելով մեկ աշխատանքային օրվա ընթացքում շտկել անհամապատասխանությունը:

24. Արձանագրված անհամապատասխանությունն առաջին տեղն զբաղեցրած մասնակցի կողմից սահմանված ժամկետում՝

1) շտկվելու դեպքում հայտը գնահատվում է բավարար, և առաջին տեղն զբաղեցրած մասնակիցը հայտարարվում է ընտրված մասնակից.

2) չշտկվելու դեպքում հանձնաժողովի որոշմամբ հայտը մերժվում է, և փաստաթղթեր ներկայացնելու պահանջ է ներկայացվում հաջորդաբար տեղ զբաղեցրած մասնակցին:

«Սևանի հոգեբուժական հիվանդանոց» ՓԲԸ-ի կողմից «Սևանի հոգեբուժական հիվանդանոց» ՓԲԸ-ի կարիքների համար կազմակերպվել է «ՍՀՀ-ԷԱՃԱՊՁԲ-19/3»

ծածկագրով էլեկտրոնային աճուրդ, որին մասնակցելու նպատակով հայտ է ներկայացրել Ա/Ձ Շուշանիկ Ավագյանը:

Աճուրդի գնահատող հանձնաժողովի 10.01.2019թ. ժամը 11:00-ի նիստի արձանագրությամբ կայացված որոշմամբ Ա/Ձ Շուշանիկ Ավագյանը ճանաչվել է առաջին տեղ զբաղեցրած մասնակից Ընթացակարգի մի շարք չափաբաժինների մասով, որին էլեկտրոնային աճուրդի համակարգի միջոցով ծանուցվել է սահմանված ժամկետում և կարգով որակավորման չափանիշները հիմնավորող փաստաթղթերը ներկայացնելու անհրաժեշտության վերաբերյալ:

Աճուրդի գնահատող հանձնաժողովի 16.01.2019թ. ժամը 14:30-ի նիստի թիվ 4 արձանագրության համաձայն՝ Ա/Ձ Շուշանիկ Ավագյանը չի ներկայացրել ապրանքի ամբողջական նկարագիրը՝ ***համակարգը չաշխատելու պատճառով:***

Նույն արձանագրության համաձայն, գնահատող հանձնաժողովը, հիմք ընդունելով ՀՀ ֆինանսների նախարարության հայտարարությունը այն մասին, որ 2019թ. հունվարի 11-ից մինչև հունվարի 14-ը համակարգը չի գործել, հանձնաժողովը որոշել է կասեցնել նիստը և Մասնակցին ծանուցել մեկ աշխատանքային օրյա ժամկետում՝ մինչև 18.01.2019թ. ժամը 09:30-ը շտկել անհամապատասխանությունը:

Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 18.01.2019թ. ժամը 11:30-ի նիստի թիվ 5 արձանագրության կայացված որոշմամբ Ա/Ձ Շուշանիկ Ավագյանի հայտը մերժվել է այն հիմնավորմամբ, որ Մասնակցի կողմից հրավերով սահմանված ժամկետում և կարգով չի շտկվել անհամապատասխանությունը, մասնավորապես ապրանքի տեխնիկական բնութագիրը լրացվել է թերի:

«Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «ա» ենթակետը սահմանում է, որ մասնակիցը ընդգրկվում է գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում, եթե խախտել է գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունը, որը հանգեցրել է գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը:

Հրավերի 7-րդ կետի 7.12-րդ ենթակետի համաձայն՝ եթե մասնակցի՝ հրավերով նախատեսված գնումներին մասնակցելու իրավունք ունենալու մասին հայտով ներկայացված հայտարարությունը որակվում է որպես իրականությանը

չհամապատասխանող կամ մասնակիցը կամ առաջին տեղ զբաղեցրած մասնակիցը հրավերով սահմանված կարգով և ժամկետներում չի ներկայացնում հրավերով նախատեսված փաստաթղթերը, ապա այդ հանգամանքը համարվում է որպես գնման գործընթացի շրջանակում ստանձնված պարտավորության խախտում:

Այսիսով՝ Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 16.01.2019թ. ժամը 14:30-ի նիստի թիվ 4 արձանագրության համաձայն՝ Ա/Ձ Շուշանիկ Ավագյանը չի ներկայացրել ապրանքի ամբողջական նկարագիրը՝ ***համակարգը չաշխատելու պատճառով:*** Այսինքն Մասնակիցը ապրանքի տեխնիկական բնութագիրը սահմանված եռօրյա ժամկետում չի ներկայացրել իր կամքից անկախ պատճառներով՝ համակարգի աշխատանքի հետ կապված ժամանակավոր տեխնիկական խնդիրների պատճառով:

Միևնույն ժամանակ գնահատող հանձնաժողովը որոշվել է կասեցնել նիստը և առաջարկել Մասնակցին մեկ աշխատանքային օրյա ժամկետում որպես անհամապատասխանության շտկում ներկայացնել ապրանքի տեխնիկական բնութագիրը: Մասնակցի կողմից ներկայացվել է տեխնիկական բնութագիրը, որի մեջ սակայն առկա են եղել թերություններ: Գնահատող հանձնաժողովը մերժել է Մասնակցի հայտը:

Այս տեսանկյունից գտնում եմ, որ հաշվի առնելով այն հանգամանքը, որ Մասնակիցն ի սկզբանե համակարգի չաշխատելու հետևանքով զրկված է եղել Կարգի 19-րդ կետի 4-րդ ենթակետով սահմանված կարգով պահանջվող փաստաթուղթը ներկայացնելու հնարավորությունից, ուստի տեխնիկական բնութագիրը ներկայացնելուց հետո դրանում անհամապատասխանություն արձանագրվելու պայմաններում, Մասնակցին պետք է տրվեր անհամապատասխանությունները Կարգի 23-րդ կետի համաձայն շտկելու հնարավորություն: Նման պայմաններում գտնում եմ, որ հնարավոր չէ արձանագրել Մասնակցի կողմից գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորության խախտման փաստը, քանի որ Մասնակցի կողմից ներկայացված տեխնիկական բնութագիրը պետք է դիտարկել Կարգի 19-րդ կետի 4-րդ ենթակետով սահմանված կարգով ներկայացված, մինչդեռ Կարգի 23-րդ կետը նախատեսում է անհամապատասխանությունը շտկելու հնարավորություն:

Գտնում եմ, որ Մասնակիցը «ՍՀՀ-ԷԱՃԱՊՁԲ-19/3» ծածկագրով էլեկտրոնային աճուրդի շրջանակներում թույլ չի տվել «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին

մասի 6-րդ կետի «ա» ենթակետով նախատեսված պարտավորության խախտում, ուստի առկա չեն Մասնակցին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու հիմքերը:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 50-րդ հոդվածի 7-րդ մասի 2-րդ կետով՝

Ո Ր Ո Շ Ե Ց Ի

Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 30.01.2019թ. թիվ 27/26-3/1178-19 գրությամբ Ա/Ձ Շուշանիկ Ավագյանին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված ընթացակարգը մերժել:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի որոշումն իրավապարտադիր է և ուժի մեջ է մտնում տեղեկագրում հրապարակվելու հաջորդ օրը:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի որոշումը կարող է փոփոխվել կամ վերացվել, այդ թվում՝ մասնակի, միայն դատարանի կողմից:

Գնումների հետ կապված բողոքներ քննող անձ՝ **ՄՀԵՐ ԱՆԱՆՅԱՆ**